HEINRICH BÖLL STIFTUNG
Հարավային Կովկաս

AUA ՅԱԿՈԲԵԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

«Կայուն էներգետիկայի ակադեմիա 2018» Երիտասարդության և քաղհասարակության քայլը՝ նախագծային առաջարկների մշակում

Հետևյալ աղյուսակում ներկայացված են Կայուն էներգետիկայի ակադեմիա 2018-ի նախագծերի առաջարկների գնահատման չափանիշները: Յուրաքանչյուր չափանիշ ունի իր գնահատման կշիռը, որը ներկայացված է աղյուսակում:

Նախագծի առաջարկը պետք է անդրադառնա կայուն էներգետիկայի բնագավառում որևէ խնդրի:

#	Գնահատման չափանիշներ – Նկարագրություն	Կշիռ
1	**Իրավիճակի վերլուծություն** • Որքանո՞վ է նախագիծը պարունակում ելակետային իրավիճակի նկարագիր և նախնական տվյալներ: • Առկա՞ է կապ ծրագրի նպատակի և խնդիրների միջև:	15%
2	**Իրագործելիություն և կենսունակություն** • Որքանո՞վ են իրագործելի և ֆինանսապես կենսունակ: • Կարո՞ղ է արդյոք նախագիծն իրականացվել ժամանակին (մինչև վերջնաժամկետը): • Արդյոք գործողությունները պատշաճ կերպով արտացոլվա՞ծ են բյուջեում:	15%
3	**Ազդեցություն** • Արդյոք նախագիծն ունի՞ տնտեսական ազդեցություն: • Արդյոք նախագիծն ունի՞ սոցիալական ազդեցություն: • Արդյոք նախագիծն ունի՞ ազդեցություն շրջակա միջավայրի վրա: • Արդյոք հավանակա՞ն է, որ նախագիծը կունենա շոշափելի ազդեցություն շահառու համայնքի վրա կայուն էներգետիկայի նպատակների իրականացման տեսանկյունից :	20%
4	**Շահառուներ** • Ո՞րքան լայն և ներառուն է նախաձեռնությունը (շահառուների քանակ, խմբեր): • Ովքե՞ր են նախագծի շահառուները:	10%
5	**Իրազեկում** • Ինչպե՞ս կապ կհաստատեք շահառուների հետ: Ինչպե՞ս կբարձրացնեք կայուն էներգիայի խնդիրների մասին հանրության իրազեկումը, կապահովեք տեղեկատվության հասանելիությունը և կստեղծեք հարթակ տեղեկատվության փոխանակման համար: • Որոնք են նախագծի այն արդյունքները, որոնք պետք է գնահատվեն և ներկայացվեն համայքնի անդամներին:	15%
6	**Կրկնօրինակման հնարավորությունը** • Որքանո՞վ է նախաձեռնությունը խթան հանդիսանալու համայնքի այլ անդամների համար նման նախաձեռնություններ ինքնուրույն նախաձեռնելու համար, • Որքա՞ն նոր հնարավորություններ կստեղծվեն: • Որքանո՞վ կապահովվի մնայուն, շարունակական ազդեցություն:	10%
7	**Նորարարություն** • Որքանո՞վ է նախագիծը նորարարական Ձեր համայնքի համար: • Արդյո՞ք նախագիծը պարունակում է սոցիալական ձեռնարկատիրության սկզբունքներ:	10%
8	**Համաֆինանսավորում** • Արդյոք նախագիծն ունի՞ համաֆինանսավորում: • Արդյոք համաֆինանսավորումը բավարար և իրատեսական է՞: • Նախագծի բյուջեի քա՞նի տոկոսն է դրամաշնորհից: Նախագծի բյուջեի քա՞նի տոկոսն է համաֆինանսավորումից: • Որո՞նք են համաֆինանսավորման ռեսուրսները: (Օրինակ՝ սա կարող է ներառել Ձեր կամ Ձեր թիմի կողմից տրամադրած ժամանակը, հարմարությունները և այլն)	5%

HEINRICH BÖLL STIFTUNG
Հարավային Կովկաս

AUA ՅԱԿՈԲԵԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Իրավասություն

Այս ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր դիմորդ պետք է ներկայացնի միայն մեկ նախագիծ: Դիմորդը պետք է մասնակցած լինի Գետիկ Հովիտում տեղի ունեցած Կայուն էներգետիկայի ակադեմիա 2018-ի «Երիտասարդության և քաղհասարակության դասընթացի» առնվազն մեկ օրվան:

Յուրաքանչյուր մասնակից (անկախ նրանից, նախագծի դիմորդ է, թե ոչ) պետք է նախագիծ ներկայացնող միայն մեկ թիմի անդամ լինի: Միևնույն անձը չի կարող մասնակցել մեկից ավելի նախագծի:

Նախագծի առաջարկը պետք է անդրադառնա կայուն էներգետիկայի բնագավառում որևէ խնդրի:

Վերջնաժամկետներ

Առաջարկը պետք է ներկայացվի ոչ ուշ, քան վերջնաժամկետը (**Հոկտեմբերի 14, 2018**):

Նախագծի առաջարկները կգնահատվեն ներկայացնելու վերջնաժամկետից հետո մեկ շաբաթվա ընթացքում: Հաղթող նախագծերը կներկայացվեն մինչև **հոկտեմբերի 21-ը, 2018թ.**:

Հաղթող նախագիծը պետք է ամբողջությամբ իրականացվի դրամաշնորհը ստանալուց հետո չորս շաբաթների ընթացքում: (Վերջնաժամկետը՝ **նոյեմբերի 18, 2018**)

Ընտրության ընթացք

Դրամաշնորհի տրամադրման համար կազմված հանձնաժողովը անհատապես կկարդա և կգնահատի յուրաքանչյուր առաջարկ: Հանձնաժողովը կգնահատի 8 չափանիշներից յուրաքանչյուրը: Հաղթող նախագիծը որոշելու համար յուրաքանչյուր նախագծի առաջարկի համար հանձնաժողովի անդամներից յուրաքանչյուրի գնահատականները կմիջինացվեն:

Ֆինանսավորման հավակնելու համար նախագիծը միջինում պետք է ստանա առավելագույն միավորների **50%**-ից ավելին:

Թափանցիկություն

Դիմորդներին կտրամադրվի բավարար բացատրություն մեկնաբանությունների միջոցով:

Դրամաշնորհի գումար

Դրամաշնորհի առավելագույն գումարն է 283815 դրամ (500 եվրոյին համարժեք): Արդյունավետ և հաղթող նախագծերը պարտադիր չէ, որ պահանջեն դրամաշնորհի առավելագույն գումարը:

Խնդրում ենք ձեր նախագծի առաջարկներն էլեկտրոնային տարբերակով ուղարկել հետևյալ երկու էլ. հասցեներին՝
ace@aua.am
n.benohanian@aua.am